

դինակը, ստաչին տպագրական մեքենան Սեբաստիա է բերել Անդրանիկ Վարդանյանը ղեկնա 1875 թ., իսկ հաջորդ՝ 1876 թ. մարտից սկսել է լույս ընծայել «Արմաս» շաբաթաթերթը, որը տպագրվել է նախ թուրքերեն և հայերեն լեզուներով, ապա հայերենը վերածվել է հայատառ թուրքերենի, իսկ 1878-ից, անցնելով կառավարության ձեռքը, դարձել է զուտ թուրքական օրգան։ Հետագայում իր տպարանն է բացում Սեբաստիայում Ա. Վարդանյանի օրդին՝ Հայկ Վարդանյանը։ Նա 1909 թ. հունվարից այդ տպարանում սկսում է լույս ընծայել «Անդրանիկ» շաբաթաթերթը, որն իր գոյությունը շարունակում է մինչև 1911 թ. հուլիսը։ Հաջորդ երկու՝ «Հոգեդար» (1910 թ.), իսկ զրանից հետո ավելի կատարելագործված «Կարիրա» տպարանները Սեբաստիայում բացում է ինքը՝ Կ. Ա. Պարսամյանը։ Առաջինում նա տպագրում է «Հոգեդար» թերթը (1910 թ. հոկտեմբերից), որին աշխատակցել են Գ. Վարուժանը, Թլկատինցին և ուրիշներ։ «Կարիրան» սկսում է գործել 1913 թ. սեպտեմբերից, որտեղ տպագրվում են մի շարք հայերեն գրքեր։

Մենք մի փոքր ավելի կանգ առանք նամակների բովանդակության վրա, ցույց տալու համար դրանց կարևորությունը հայ տպագրության պատմության համար։ Ինչպես գրում է Գր. Պասմաճյանը իր աշխատության նախաբանում, իր մոտ ղեկնա մնում են «Եփդոկիայեն, Պրոսպան, Ալեքսանդր, Գոնիայեն, Մամսոնեն, Տրապիզոնեն և Տարսոնեն գրված նամակներ, որոնք մոտիկ տպագրվին ու պատեն՝ առիթի մը նույնպես

հրատարակության պիտի տանք»։ Կասկած չկա, որ այս անտիպ նամակներում ևս շատ հետաքրքիր ու նոր նյութեր կլինեն հայ տպագրության պատմության վերաբերյալ։

Ինչպես «Տպագրության արվեստը և հայր» արժեքավոր ուսումնասիրության, այնպես էլ արևմտահայ գաղառներից ստացված այս նամակների գոյությունը բաղձալստակ պատմաբան և բանասեր Արշակ Ալպոյաճյանի գրչի ու չափասիրության երախտի են։ Դրանց հրատարակությունը կարևոր ներդրում կլինի հայ մշակույթի և, մասնավորապես, մեր տպագրության պատմության հետազոտումնասիրության գործում։ Ներկայումս, որքան մեզ հայտնի է, նախապատրաստական աշխատանքներ են տարվում հրատարակության պատրաստելու Ա. Ալպոյաճյանի «Տպագրության արվեստը և հայր» ուսումնասիրությունը։ Դրա մի գլուխը՝ «Զրմյունիտ տպարանները», բանասեր Մ. Հակոբյանը իր ծանոթագրություններով հրապարակել է «Պատմա-բանասիրական հանդեսում» (1964, № 2)։ Ամբողջ ուսումնասիրությունը հրատարակելու համար անհրաժեշտ կլինի համագործել այն ամենը, ինչ գրել է հայկական տպագրության շուրջը Ա. Ալպոյաճյանը իր մյուս՝ տպագիր ու ձեռագիր աշխատություններում։ Այդ գործին կօժանդակի նաև վերևում հիշված յոթ նամակների հրապարակումը, որը, մեզ հասած տեղեկությունների համաձայն, պատրաստվում է իրականացնել Գր. Պասմաճյանը։

Մ. ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅՆԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵԴԿԱՍՏԱՆԻՑ

Անվանի պատմաբան Արշակ Ալպոյաճյանը ժամանակին նշել է, որ Երուն Հնդկաստանի... երկու քաղաքներում՝ Քաշմիրի և Լահորի մեջ, նոր Զուլայի հիմնարկությունն առաջ հայեր հաստատված էին¹։

Հնդկահայ գաղութի վաստակաշատ պատմաբան Մեսրոպ Սեթյանցն իր աշխատության XV գլխում խոսելով Լահորի հայ գաղթօջախի մասին, գրում է, որ մի ժամանակ ծաղկուն այս գաղութից պահպանվել են միայն չորս տասնանաբարեր²։ Հնդկահայ գաղթօջախի պատմու-

թյան վերաբերյալ իր հոգվածում Ա. Հատիտյանը ևս նշում է, որ Լահորի կենտրոնական թանգարանում պահվում են չորս տասնանաբարեր՝ հայերեն արձանագրությամբ, որոնցից հնագույնը կրում է 1601 թվականը³։

1904 թ. Կալկաթայում անցկերեն լեզվով լույս է տեսել Հնդկաստանի հնագիտական ընկերության 1902—1903 թթ. տարեկան տեղեկագիրը, որի մեջ Ժ. Ֆ. Վոգելն ունի մի կարճ հոդված՝ «Հայկական արձանագրություններ Բելուչիստան»։


¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հայերու ցրվումը աշխարհի գանաղան մասերը, հատ. Դ, Ա մաս, Կահիրե, 1961, էջ 298։

² Տե՛ս Տեղի Mesrobian Jacob, Armenians in India, Calcutta, 1937, էջ 202։

³ Տե՛ս Ա. Հատիտյան, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրության հարյուրհիսունամյակի առիթով։ Համառոտ ակնարկ Հնդկահայ գաղթօջախի պատմության վրա (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1971, օգոստոս, էջ 37)։

նում» վերնագրով⁴։ Հողվածին կից ներկայացված են հայկական արձանագրությամբ երեք քարերի լուսանկարները, որոնք վերարտադրվում են ստորև։ Չնայած որ Սեթյանը և Հատիտյանը խոսում են շորս քարերի մասին, Վոգելը նշում է դրանցից միայն երեքը, ավելացնելով, որ

մենայն դեպս, կարևորն այն է, որ այս քարերը ապացուցում են, որ դեռևս XVII դարի առաջին երկու տասնամյակում հայեր են ապրել հյուսիս-արևմտյան Հնդկաստանում, ավելի ճիշտ՝ ներկայիս Պակիստանի Արևմտյան Փենջաբի նահանգում։



Հահորի թանգարանում գտնվող այդ քարերը գրանցված են 144, 155 և 157 համարների տակ։ Վոգելի վկայությամբ դրանք գտնվել են 1901 թ. Քաչում (Kach), որը Բելուջիստանում գտնվող երկաթուղային մի կայարան է և Հահորից հեռու է շուրջ 700—800 կմ։ Մեզ թվում է, թե Մ. Սեթյանցը շփոթության մեջ է ընկել գրելով, որ այս տապանաքարերը Հահորից են, քանի որ Վոգելը իր հողվածում հստակ կերպով նշում է քարերի հայտնաբերման ճշգրիտ վայրը։ Հա-

Աուաթին տապանաքարի վրա հստակ երևում է մի խաչ, որի ներքևում գրված է. «Խան Բ... [Գ]էորգ»։ Քարի վերևի աջակողմյան մասը չարդված լինելով՝ «Բ» տառից հետո գրվածը կորել է։ Քարի թվականն անհայտ է։

Երկրորդ քարի վրա գրված է. «Ավետ. Բր. Ա. Ք. Թվ. ԹԾ»։ ԹԾ թիվը համարվեք է 1601-ի, որով հստակ կերպով որոշվում է տապանաքարի թվականը։

Երրորդ քարի վրա գրված է կապգրեթով «Ղե-վոնդ Թկ. ԹԿԵ»։ ԹԿԵ թիվը համարվեք է 1616-ի, որով այստեղ ևս պարզվում է տապանաքարի ճշգրիտ թվականը։

Վերոհիշյալը ցույց է տալիս, որ այս տապա-

⁴ J. Ph. Vogel, Armenian Inscriptions in Baluchistan (տե՛ս Archeological Survey of India, Annual Report 1902—1903, Calcutta, 1904, էջ 272—274)։

նարարներից զոնն երկուսի տերերը ապրիլ և զործել են XVII դարի երկրորդ կեսին կամ վերջերին և մահացել են 1601 թ.։ Բացի այդ, առաջին բարի վրա հիշվում է ձիան տիտղոսը, ուրեմն Գեորգը պետք է պատկանած լիներ տեղի հայկական զաղթօջախի ունեւոր դասակարգին, մինչդեռ մյուս երկու տապանաքարերի կվետն ու Ղևոնդը այդպիսի տիտղոս չունեն։

Կվետի շիրմաքարի թվականից (1601 թ.) պարզվում է, որ նա այդ կողմերը զաղթել է Շահ Արասի կաղմակերպած հայկական բռնազաղթից (1605 թ.) տարիներ առաջ։ Գալով Ղևոնդին, նա զույցն Շահ Արասի գոհներից լինի, որ հետադաշում Պարսկաստանը թողնելով գնացել ու հասել է մինչև Հնդկաստան, սակայն կարող է

պատահել նաև, որ ավելի շուտ հասած լինի Իսկ Գեորգ խանի մասին որոշ կարծիք չենք կարող հայտնել, բանի որ շիրմաքարի թվականն անհայտ է։ Հետաքրքիր է, որ Կվետի 1601 թ. շիրմաքարը տասը տարով ավելի հին է, քան Հնդկաստանի Կերաս քաղաքի հայկական դերեզմանատանը պահպանված ամենահին տապանաքարը (1611 թ.), որ պատկանում է Բիթլիսեցի Լևոնի որդի Կղա Մուրադին⁵։ Կյսպիսով պարզվում է, որ այժմ Լահորի թանգարանում գտնվող հայկական այս երեք տապանաքարերը պատկանում են հնդկահայ զաղուծի պատմության հնագույն շրջանին⁶։

Ն. ՄԻՔԱՅԻԼՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

(Մատենագիտություն, 1972)

Ստորև ներկայացնում եմ Սովետական Միությանից դուրս հրատարակվող ոչ հայկական հանդեսներում լույս տեսած հայագիտական հոդվածների ցանկը (եղև հայկական տառով՝ եկատի են առնվում այն հանդեսները, որոնք լույս են տեսնում օտար լեզուներով)։ Ինչպես նախկինում, այս ցանկում ես տեղ չի տրված հայկական հնագիտությանը կամ ուրարտագիտությանը վերաբերող հոդվածներին, սակայն հնարավոր ամեն ինչ արված է ընդգրկելու համար հայ ժողովրդի պատմությանը, հայերենին, հայ գրականությանն ու արվեստին վերաբերող բոլոր հրապարակումները։

G. R. Barratt, A Note on the Russian Conquest of Armenia (1827). *The Slavonic and East European Review* (London), vol. 50 (1972), p. 386—409.

(The capture of the fortress and khanate of Erevan).

H. Bartikian, Encore une fois sur l'origine du nom pauliciens, *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 9 (1972), p. 445—451.

K. Bekdashian, Die Armenische Apostolische Kirche und ihre Liturgie, *Kyrios* (Berlin), N. F. vol. 12 (1972), p. 107—116.

G. Boudoyan, et M. Thierry, Les églises de Thil (Korluca) dans le Vilayet de Tunceli (Turquie), *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 9 (1972), p. 179—191.

M. Canard, Le conte de l'île-baleine et son utilisation dans la polémique byzantine

contre les pauliciens, *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 9 (1972), p. 379—384.

M. J. Connolly, A Descriptive Normalization of the Classical Armenian Nominal System, *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 9 (1972), p. 1—45.

Y. Dachevych, Les historiens arméniens en Ukraine au XVIII^e siècle, *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 9 (1972), p. 385—424.

Я. Дашкевич, З. Служкевич, Два армянских документа XVII в. из львовских коллекций, *Rocznik Orientalistyczny* (Warsaw), vol. 35 (1972), p. 77—110.

M. van Esbroeck, Le roi Sanatrouk et l'apôtre Thaddée, *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 9 (1972), p. 241—283.

⁵ Տե՛ս Լ. Սեթյանցի վերոհիշյալ գիրքը էջ 122։

⁶ Հնդկահայերի պատմության հետ առնչվող որիշ չորս տապանաքարեր եւ հայտնաբերվել են հեռավոր Մալակկայում, որոնցից երեքի թվականներն են 1736, 1746 և 1774, իսկ չորրորդի թվականն անհայտ է (այս մասին տե՛ս „Journal Asiatique“, Onzième Série, t. XIII, Paris, 1919, „Note sur quelques inscriptions funéraires arméniennes de Malacca“, էջ 560—568, նաև՝ նույն ածապրի t. XV, 1920, էջ 238—240)։